ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

N 2636, *24 հոկտեմբեր 2022թ.*

<<ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ>> ՀԿ
ԼՐԱԳՐՈՂ
ՏԻՐԱՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի Տիրայր Մուրադյան,

Ի պատասխան Ձեր 28.09.2022 թվականին Մասիսի համայնքապետարանին ուղղված հարցման՝ տեղեկացնում եմ, որ 2021 թվականի դեկտեմբերի 17-ի համայնքների խոշորացումից հետո պարզ դարձավ, որ մի շարք բնակավայրերում, այդ թվում Մասիս համայնքի Հայանիստ բնակավայրում առկա են ձկնարտադրությամբ զբաղվող բազմաթիվ տնտեսվարողներ, ովքեր գյուղատնտեսական նշանակության հողամասերում, առանց նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու կառուցել են ինքնակամ շինություններ՝ ջրավազաններ և օժանդակ շինություններ:

Մասիս համայնքը տեղեկանալով ինքնակամ շինությունների և հողամասերի ոչ նպատակային օգտագործման մասին, առանձին հարուցում է վարչական վարույթներ՝ ինքնակամ շինությունները օրինականացնելու /հաշվառելու/, հողամասերի նպատակային օգտագործումներն ապահովվելու նպատակով:

Ձեր հարցման մեջ նշված տնտեսությունը ևս կառուցվել է առանց շինարարական թույլտվության և առանց հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու:

Հաշվի առնելով առանց հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոխելու ինքնակամ կառուցված ձկնաբուծական տնտեսությունների քանակը, ինչպես նաև դրանց հաշվառելու աշխատանքների բարդությունը՝ Ձեր կողմից հարցված տեղեկատվությունն ամբողջական կարող ենք տրամադրել մինչև սույն թվականի նոյեմբերի 15-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

Կատ. Իրավաբանական
բաժնի գլխավոր
մասնագետ՝ Վ. Սահակյան